

ՀԱՅԵՐԵՆԻ ՈՐՈՇԻՉ ՀՈԴԻ ՄԻ ՇԱՐՔ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Ե. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հոգը թեև միշտ էլ եղել է հայ քերականների ուշադրության կենտրոնում¹, այնուամենայնիվ նրա հետ կապված մի քանի կարևոր հարցեր անհրաժեշտ չափով չեն լուսաբանվել: Որպես գոյականի քերականական կարգի ցուցիչ, հոգը որոշակի յուրահատկություններ է ցուցաբերում կախված այն բանից, թե գոյական անունը իր նշանակելին (դեմոտատը) խոսքի մեջ ինչ առումով է ներկայացնում:

Գոյականը, ըստ իր նշանակելիի, խոսքի մեջ կարող է հանդես գալ երկու հիմնական առումով՝ ընդհանուր-հասկացական և կոնկրետ-առարկայական: Այլ կերպ, գոյականի նշանակելին մի դեպքում կարող է լինել հասկացությունը, իսկ մյուս դեպքում՝ առարկան:

Առաջին դեպքում բառը ներկայանում է որպես հասկացության ընդհանուր անուն, առանց այն մասնավորեցնելու կոնկրետ առարկայի կամ առարկաների շուրջը: Այստեղ հակադրվում են ոչ թե առարկաները, այլ հասկացությունները: Այսպես, «Ձին կենդանի է» նախադասության մեջ ձին բառաձևով արտահայտվում է ձի կենդանու հասկացությունն ընդհանրապես, որը հակադրվում է նույնական շրջապատում հանդես եկող այլ հասկացությունների, բայց ոչ այլ առարկաների (առավել ևս՝ այլ ձիերի): Դրա համար էլ այսպիսի կիրառություններում անունները սովորաբար լրացում չեն ստանում: Եթե, ասենք, հնարավոր է անգամ «Վայրի ձին կենդանի է» ձևը, ապա այս դեպքում էլ վայրի ձին կապակցությունը գիտակցվում է որպես մի ամբողջական հասկացության անուն, այլպես տվյալ կիրառությունը կդիտվի ոչ թե որպես ընդհանուր-հասկացական, այլ որպես կոնկրետ-առարկայական: Համենայն դեպս, բացառվում է ուրբա՛ն, ո՛ր, ո՛րեքո՛րդ, ու՛մ հարցերին պատասխանող լրացումների (օրինակ՝ այս, նախորդ, հինգ, իմ, առաջին, միևնույն, Սուրենի...) հետ զուգորդման հնարավորությունը:

Բառի ընդհանուր-հասկացական առման մասին Հր. Աճառյանը գրում է. «Ընդհանուր սեռը... արդի աշխարհաբար հայերենում նշանակվում է որոշյալ հոգով, այսպես նաև ֆրանսերենում, գերմաներենում, իտալերենում և գրեթե բոլոր Եվրոպական լեզուներում»²: Այս հարցը, սակայն, կարոտ է ավելի ման-

¹ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 518—528, Հ. Աճառյան, Կիսկատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, հ. 3, Երևան, 1957, էջ 933—992, Հ. Պետրոսյան, Գոյականի առումները հայերենում, Երևան, 1960, Ծ. Կումանյան, Артикли в современном армянском языке, Ереван, 1963, Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 184—189, Մ. Աբրահամյան, Հայոց լեզվի քերականություն, Երևան, 1969, էջ 48—51, Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա, Երևան, 1970, էջ 217—267, Մ. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Երևան, 1974, էջ 106—115:

² Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 934:

րամասն քննության: Դիտարկենք հետևյալ տիպական օրինակները. «Հավը ընտանի թռչուն է»: «Հավերը ընտանի թռչուններ են»: «Ձուկը շնչում է խռիկներով»: «Ձկները շնչում են խռիկներով»: «Աշակերտը պետք է հարգի ուսուցչին»: «Աշակերտները պետք է հարգեն ուսուցիչներին»: «Քաղաքում այդ օրը զինվորներն էին»: «Քաղաքում այդ օրը զինվորները երևացին»: «Անտառում նա վառագ տեսավ»: «Անտառում նա վառագներ տեսավ»: Այս նախադասությունների ընդգծված բոլոր բառաձևերը նշում են հասկացությունը, հետևաբար և առնված են ընդհանուր-հասկացական իմաստով: Սակայն, ինչպես տեսնում ենք, դրանց մի մասը որոշիչ հոգ ունի, իսկ մի մասը՝ ոչ: Բանն այն է, որ այն դիրքերում, ուր ունենք որոշիչ հոգ, անհոգ կիրառություն ընդհանրապես հնարավոր չէ (հմտ. «Հավը ընտանի թռչուն է»): Փաստորեն բառի ընդհանուր-հասկացական առման դեպքում ը/ն և զրո ձևությամբ հանդես են գալիս որպես դիրքային տարբերակներ և որոշ իմաստով գտնվում են լրացական հարաբերության մեջ: Որոշիչ հոգը այս իմաստով կիրառվում է անվանական (գոյականական) բաղադրյալ ստորոգյալի և պարզ ստորոգյալի ընդհանրական ներկա և ընդհանրական ապառնի ժամանակաձևերի հետ: Գոյականը այդ դեպքում սովորաբար ենթակա է լինում. խնդրի պաշտոնով այն կարող է հանդես գալ միայն ենթականայի նշված կիրառությանը հակադրելու դեպքում՝ որպես հակադրության մյուս հզր (հմտ. «Աշակերտը պետք է հարգի ուսուցչին»): Իսկ եթե ենթական արտահայտված է ոչ թե գոյականով, այլ գոյականաբար առնված որևէ այլ խոսքի մասով, ապա ընդհանուր-հասկացական իմաստով կարող է հանդես գալ նաև ստորոգելիական վերադիրը (հմտ. «Նորամասնը աղվեսն է և ոչ թե գայլը»: «Քո ասածը խնձորն է և ոչ թե նարինջը»):

Մնացած բոլոր դեպքերում բառի ընդհանուր-հասկացական իմաստը առնվում է անհոգ ձևով: Ընդհանրապես պետք է նկատել, որ ի՞նչ հարցին պատասխանելու (այսինքն՝ ոչ պարագայական կիրառության) դեպքում գոյականի բոլոր անհոգ կիրառությունների մեջ նշանակելին հասկացությունն է և ոչ թե առարկան (բնականաբար բացառվում են այն գործածությունները, երբ անհոգ ձևը թելադրվում է լրացման պահանջով, օրինակ՝ ամեն գիշեր, և մասնավորապես այն դեպքերը, երբ բառերն ուղեկցվում են քանակական բնույթի որոշիչներով, օրինակ՝ շատ երեխաներ): Այդ է պատճառը, որ անհոգ ձևի հետ (որպես ի՞նչ հարցի պատասխան) չեն կարող զուգորդվել ո՞ր, ո՞րեքորդ, ու՞մ հարցերի պատասխան հանդիսացող լրացումները, որոնց համար պարտադիր է լրացյալի կոնկրետ-առարկայական առումը: Սրանով պետք է բացատրել նաև հայ քերականագիտության մեջ մասամբ միայն նկատված այն երևույթը, որ սեռականով գոյականը անհոգ լրացյալի հետ, որպես ընդհանուր կանոն, գիտակցվում է ոչ թե հատկացուցիչ, այլ որոշիչ և պատասխանում է ոչ թե ինչի՞ կամ ու՞մ, այլ ինչպիսի՞ կամ նույնիմաստ ի՞նչ հարցին: Օրինակ՝ «Սեղանին Սեանի. (ի՞նչ, ինչպիսի՞) ձուկ էր դրված» (= սեանյան): «Ինձ աշակերտի (ի՞նչ, ինչպիսի՞) գիրք է պետք» (= աշակերտական):

Այստեղ տեղի է ունենում երկու հակադիր միտումների բախում. մի եզրում ունենք սեռականը իր հատկացական, մասնավորեցնող նշանակությամբ, իսկ մյուսում՝ անհոգ ձևը լիովին հակառակ ընդհանուր-հասկացական առումով: Արդյունքը լինում է այն, որ վերջին միտումը հաղթում է առաջինին, զբրկում նրան հատկացուցչային իմաստից և դարձնում որոշիչ: Սրա շնորհիվ էլ

Սեանքի ձուլ և աշակերտի զիրք կապակցություններից յուրաքանչյուրը միասնական ձևով ներկայանում է որպես մի ամբողջական հասկացության անուն:

Հայտնի է, որ գրաբարում ընդհանուր-հասկացական իմաստ արտահայտվում էր միայն անհոգ ձևով³: Որոշյալ հոգը գրաբարում ամենեկին նման չէ ո՛չ հունարենի, ո՛չ եվրոպական լեզուների, և ո՛չ էլ աշխարհագրի հոգին: Այս բոլորի մեջ էլ որոշյալ հոգը միայն մի կողմ ունի, այն է՝ թե արդյոք առարկան արդեն հիշված կամ ծանոթ է: Իսկ գրաբարի մեջ՝ նշանակում է, թե հիշված և ծանոթ առարկան երեք դեմքերից որի՞ հետ անմիջական կապակցության մեջ է⁴: Ուրեմն, շնորհիվ իր ֆունկցիոնալ բազմիմաստության, անհոգ ձևը դիրքային սահմանափակություն չունի: Հետագայում միայն իմաստի աղքատացման և դրա հետ կապված կիրառական ոլորտի ընդարձակման շնորհիվ ր/ն ձևովը եկավ փոխարինելու զրո ձևովի որոշ ֆունկցիաներին և դրանով իսկ սահմանափակեց նրա գործածության շրջանակները:

Այժմ տեսնենք, թե ժամանակակից հայոց լեզվում բառի ընդհանուր-հասկացական իմաստով առման դեպքում ի՞նչ յուրահատկություններ են ցուցաբերում հոգով և անհոգ ձևերը: Համեմատենք հետևյալ օրինակները. «Գայլը գազան է»: «Գայլերը գազաններ են»: «Նա գայլ տեսավ»: «Նա գայլեր տեսավ»: Բոլոր չորս դեպքերում էլ ընդգծված ձևերը, առնված են ընդհանուր-հասկացական իմաստով, և այս առումով էլ, ինչպես նշել ենք, առաջին երկու ձևերը վերջին երկու ձևերի նկատմամբ գտնվում են լրացական հարաբերության մեջ: Սակայն այդ զույգերը իրար հակադրվում են հասկացության որոշյալություն-անորոշություն (հայտնիություն-անհայտնիություն) իմաստով: Առաջին զույգը, այսինքն՝ հոգով ձևերը (գայլը, գայլերը) ցույց են տալիս հասկացության որոշյալությունը, հայտնի ծանոթ լինելը: Այդ է պատճառը, որ խոսքի մեջ այդ ձևերով ներկայացված նշանակելին (հասկացությունը) հանդես է գալիս որպես բնութագրվող, հատկանշվող: Իսկ անհոգ ձևերը (գայլ, գայլեր) նշում են, որ հասկացությունը անծանոթ է, որոշված չէ և նոր է հայտնի դառնում: Սրանով պետք է բացատրել, որ անհոգ ձևերը սովորաբար իրենց վրա տրամաբանական շեշտ են կրում և հազվադեպ (միմիայն տրամաբանական շեշտ ունենալու դեպքում) են լինում նախադասության ենթակա (հմտ. «Ուսանողներ են դալիս»): Ինչ վերաբերում է եզակի (գայլը, գայլ) և հոգնակի (գայլեր, գայլերը) ձևերին, ապա պետք է նշել հետևյալը. քանի որ տվյալ դեպքում բոլոր չորս ձևերի նշանակելին միևնույն հասկացությունն է, իսկ այն տվյալ քառով ներկայացվող բոլոր միատեսակ առարկաների համար նույնական է ընդհանրապես և չի կարող մեկից ավելին լինել. ապա ոչ մի էական նշանակություն չունի, թե այդ հասկացությունը մեկ, թե՞ ավելի (թեկուզ և այդ հասկացությունն արտահայտող բոլոր) առարկաներով է ներկայացվում: Հետևաբար, արտահայտության պլանում եզակիություն-հոգնակիություն հակադրություն չի ենթադրում: Այլ կերպ՝ ընդհանուր-հասկացական իմաստի դեպքում «տեղի է ունենում եզակիության և հոգնակիության հակադրության չեզոքացում»⁵, իսկ դա նշանակում

³ Այդ իմաստով կիրառությունն այժմ հեռավոր ձևով պահպանված է «Մարդ չի իմանում, ինչ անի» արտահայտության մեջ:

⁴ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 959:

⁵ Գ. Զահակյան, նշվ. աշխ., էջ 152:

է, որ այստեղ եղակիի և հոգնակիի ձևերը գտնվում են ազատ բաշխման հարաբերության մեջ (հմմտ. «Գայլը գազան է = գայլերը գազաններ են» և «Նա գայլ տեսավ = նա գայլեր տեսավ»):

Գոյականի կոնկրետ-առարկայական իմաստով առման դեպքում բառը ներկայացնում է ոչ թե ընդհանուր հասկացությունը, այլ կոնկրետ առարկան կամ առարկաները և, հետևաբար, հակադրությունն էլ կատարվում է առարկաների միջև: Դիտարկենք հետևյալ նախադասությունները. «Գրիչը ընկած է սեղանին»: «Մի գրիչ է ընկած սեղանին»: «Գրիչ է ընկած սեղանին»: «Աշակերտները եկան»: «Մի խումբ աշակերտներ եկան»: «Աշակերտներ եկան»:

Կոնկրետ-առարկայական իմաստով ընդգծված ձևերից հանդես են եկել գրիչը, մի գրիչ և աշակերտները (մի խումբ) աշակերտներ բառաձևերը, իսկ գրիչ և աշակերտներ ձևերով, ինչպես արդեն նշվել է, արտահայտվում է ընդհանուր-հասկացական իմաստ: Այդ նշանակում է, որ բառի կոնկրետ-առարկայական առման դեպքում որոշյալություն-անորոշություն (հայտնիություն-անհայտնիություն) իմաստով կարող են հակադրվել գրիչը, մի գրիչ և աշակերտները, աշակերտներ ձևերը, իսկ գրիչ և աշակերտներ ձևերը հակադրվում են նախորդ ձևերին ամենից առաջ իրենց նշանակելիի բնույթով և այս իմաստով նրանց հետ չեն կարող որոշյալություն-անորոշություն հակադրություն կազմել: Հետևաբար, այս ձևերը գտնվում են տարբեր հարթության վրա: Այսպես, եթե գրիչը ձևը ցույց է տալիս առարկայի որոշյալությունը, իսկ մի գրիչ ձևը նույն այդ առարկայի անորոշությունը, ապա գրիչ ձևը ցույց է տալիս հասկացության անորոշություն և դրա համար էլ կարող է հակադրվել նախորդ ձևերին առարկայականություն (կոնկրետություն)-հասկացականություն (ընդհանրականություն) հատկանիշով: Մյուս կողմից, եթե հասկացություն իմաստի դեպքում, ինչպես արդեն նշել ենք, կարևոր չէ բառի և զգակիությունը կամ հոգնակիությունը, ապա առարկայականության դեպքում այն ոչ միայն կարևոր, այլև պարտադիր հատկանիշ է:

Եվ քանի որ անհոգ ձևը միշտ էլ հասկացություն է արտահայտում անկախ, այսինքն՝ մասնավորեցնող լրացում չունեցող դիրքում, ապա առարկայական իմաստով անհոգ ձևերը ինքնին հանդես գալ չեն կարող. այստեղ անհրաժեշտ են մասնավորեցնող ցուցիչներ, լրացումներ, որոնց շնորհիվ բառը կկարողանա ունենալ առարկայական առում և կարտահայտի թվային որոշակիություն: Այսպես, գրիչ ձևը «Գրիչ է ընկած սեղանին» տիպի կիրառություններում մեզ որոշակիորեն չի ասում, թե քանի գրիչ է ընկած՝ մեկ, թե՞ ավել: Ուրեմն, գոյականը իր զրո ձևով ընդունակ չէ արտահայտելու թվային որոշակիություն. այն ինքնին կարող է արտահայտել հասկացության և ոչ առարկայի անորոշություն: Սրանով պիտի բացատրել մի անորոշ հոգի հանդես գալը արդի գրական հայերենում: Գրաբարում հազվադեպ հանդես եկող, իսկ միջին հայերենում արդեն միակ-մեկ թվականից տարբերակված մի ձևով առարկայական անորոշություն արտահայտելով հանդերձ, ունի թվային կոնկրետություն: Այդ է հավաստում այն փաստը, որ քանակական բնույթի այլ որոշիչների հետ անհոգ ձևի համար սովորական են և՛ եղակիի, և՛ հոգնակիի ձևերը (հմմտ. «Հինգ գիրք» — «Հինգ գրքեր», «Շատ սեղան» — «Շատ սեղաններ»): Հոգով լինելու դեպքում սովորական և ճիշտ կիրառությունն է հոգնակիի ձևը. «Վերջին հինգ դրբերը»: «Այնքան շատ սեղաններ» (հմմտ. նաև՝ «Նրանք աշակերտ են» —

«նրանք աշակերտներ են» և «նրանք աշակերտներ են», բայց ոչ՝ «նրանք աշակերտ են»):

Հոգնակի անհոգ ձևերը այդպիսի անորոշություն չունեն, նրանք միշտ արտահայտում են մեկից ավելիի գաղափար: Բավական է միայն, որ խոսքի մեջ նրանք օժտվեն լրացումներով և զրկվեն տրամաբանական շեշտից, որպեսզի նրանց նշանակելին ընդհանուր հասկացություն լինելուց դադարի և դառնա կոնկրետ առարկա:

Այսպիսով, գոյականը ընդհանուր-հասկացական և կոնկրետ-առարկայական առումներով կիրառություններից յուրաքանչյուրի դեպքում որոշակի յուրահատկություններ է դրսևորում ինչպես թվակարգի, այնպես էլ առկայացման՝ կարգի հարցում, որ պարզ երևում է աղյուսակից.

		Գոյական անուն (հոգնակի հարցի պատասխան)					
առումը ըստ նշանակելիի բնույթի		կոնկրետ-առարկայական			ընդհանուր-հասկացական		
Թիվը		եզակի		հոգնակի			
առկայացումը	արտահայտության պլան	մի	ը/ն	զրո ձև	ը/ն	զրո ձև	ը/ն
	բովանդակության պլան	անորոշություն	որոշություն	անորոշություն	որոշություն	անորոշություն	որոշություն

Հետևաբար, ուսումնասիրությունների ժամանակ պետք է հաշվի առնել գոյականի առումը ըստ նշանակելիի բնույթի, այլապես կարող են թյուրիմացություններ առաջանալ: Այսպես, օրինակ, սխալ է եզակիություն-հոգնակիություն հատկանիշով հակադրել այնպիսի բառաձևեր, որոնք ըստ նշանակելիի բնույթի տարբեր առումներ ունեն, քանի որ, ինչպես երևում է աղյուսակից, արդի հայերենում եզակիություն-հոգնակիություն իմաստային հակադրությունը կարող է լինել միայն այն դեպքում, երբ գոյականը ունի կոնկրետ-առարկայական առում:

Այժմ անցնենք հոգի հետ ուղղակիորեն առնչվող մի քանի այլ երևույթների դիտարկմանը:

1. Վերը ասածը հիմնականում վերաբերում էր այն գոյականներին (հասարակ, թանձրացական), որոնք ակտիվ են թվակարգի նկատմամբ: Սակայն հայերենում գոյականների մեջ սովորաբար առանձնացվում են նաև բառիմաստային ընդհանրություն ունեցող որոշ խմբեր, որոնք, շնորհիվ իրենց արտահայտած ընդհանուր իմաստի, հանդես են բերում քերականական առանձնահատկությունների: Հետաքրքիր է քննել դրանց վերաբերմունքը հոգի նկատմամբ: (Այստեղ մենք չենք դիտարկի բառի փոխաբերական-սինեկդոխային կիրառությունները: Հմմտ. «Հասուն ոչխարը տարավ սար»⁶: «Նրա գիրքը... սպառվեց»)⁸:

Հատուկ անուններն իրենց բուն իմաստով միշտ եզակի են, և չեն կարող ունենալ ընդհանուր-հասկացական առում: Ի տարբերություն գրաբարի, ուր

⁶ Հմմտ. Գ. Զահեկյան, *Եզ. աշխ.*, էջ 184, Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Զ. Օհանյան, *Եզ. աշխ.*, էջ 106:

⁷ Հ. Պետրոսյան, *Գոյականի թվի կարգը հայերենում*, Երևան, 1972, էջ 39:

⁸ Ս. Աբրահամյան, *Հայոց լեզվի քերականություն*, Երևան, 1969, էջ 45:

առավելապես հանդես էին գալիս անհոդ ձևով, հատուկ անունները արևելահայ աշխարհագրում, իրենց բուն իմաստով (որպես ո՞վ և ի՞նչը հարցի պատասխան), հիմնականում որոշիչ հոդ են կրում: «Մի Պողոս», «Պողոսյաններ», «Քաջ նազարներ», փոխաբերական՝ «Լենս գետը», «Հայաստան աշխարհ» ձևերը որոշչային կիրառություններ են: «Գնացինք Նրևան» տիպի ձևերը՝ պարադայական: «Սարգիս անունով մեկը» տիպի ձևերում հատուկ անձնանունը շնայած պատասխանում է ի՞նչ հարցին, սակայն հանգես է գալիս ոչ թե որպես իր նշանակած առարկայի, այլ սոսկ որպես իր, տնուն, որպես պիտակ առարկայի համար, որ նույնպես որոշչային կիրառություն է: Թերևս բուն իմաստով անհոդ կիրառություն ունենք միայն «Դրա համար նա Չարենց է, իսկ դու՝ ընդամենը միայն Սարգիս» տիպի ձևերում (ստորոգելիական վերադրի դերում):

Վերացական, հավաքական և նյութ ցույց տվող գոյականները հատուկ անունների նման չեն ենթարկվում թվի կարգին, չեն լրացվում քանակական թվականներով և, հետևաբար, չեն զուգորդվում մի անորոշ հոդի հետ: Այսուհանդերձ, նրանք կարող են հանդես գալ և՛ ընդհանուր-հասկացական և՛ կոնկրետ-առարկայական առումներով, արտահայտել որոշյալության կարգը թե՛ մեկ, թե՛ մյուս առումներով: Այս դեպքում մի անորոշի փոխարեն հանգես են գալիս մի շարք լրացումներ (սովորաբար անորոշ և ցուցական դերանուններ՝ ինչ-որ, որևէ, այդպիսի, այդքան և այլն): Օրինակ՝

Ընդհանուր հասկացական առումով, որոշյալ՝ «Բարոյականությունը գիտություն չէ»: «Գիներն ազնիվ խմիչք է»: «Ուսանողությունը ակտիվ շոկատ է»: Անորոշ՝ «Նա բարոյականություն էր քարոզում»: «Նա գինի վաճառեց»: «Հուշարձանի մոտ ուսանողություն էր հավաքվել»:

Կոնկրետ-առարկայական առում, որոշյալ՝ «Ամեն հասարակարգ իր բարոյականությունն ունի»: «Ձեր գինին համով է»: «Համալսարանի ուսանողությունը դուրս եկավ ցույցի»:

Անորոշ՝ «Ձի կարելի արվեստի մեջ այդքան բարոյականություն մտցնել»: «Մի քիչ գինի է պետք»: «Այդպիսի ուսանողություն ոչ մի ուրիշ երկրում չկա»:

Դրա մի ամօթխածություն է, որ քչերին է տրվում՝ տիպի կիրառությունների մեջ դեռևս ուժեղ է մի անորոշ դերանվան իմաստը, քանի որ այն գիտակցվում է որպես գլխավոր նախադասության հարաբերյալ (մի բան, որ հատուկ է դերանուններին), հետևաբար և հարց ընդունող նախադասության առանձին անդամ:

Անձ ցույց տվող գոյականները ընդհանուր-հասկացական առումով կիրառություններում որոշյալություն իմաստի դեպքում պատասխանում են ո՞վ, ովքե՞ր, իսկ անորոշություն իմաստի դեպքում՝ ի՞նչ, ինչե՞ր հարցերին: Օրինակ՝ «Զինվորը, (ո՞վ) ազատ քաղաքացի է»: «Զինվորները (ովքե՞ր) ազատ քաղաքացիներ են»: «Գյուղում գինվոր (ի՞նչ) երևաց»: «Գյուղում գինվորներ (ինչե՞ր) երևացին»:

Կոնկրետ-առարկայական առումով կիրառություններում ևս որոշյալ անձի անունները պատասխանում են ո՞վ, ովքե՞ր հարցերին: Օրինակ՝ «Զինվորը (ո՞վ) դուրս գնաց»:

«Զինվորները (ովքե՞ր) դուրս գնացին»: Անորոշություն իմաստի դեպքում հնարավոր են և՛ ի՞նչ (ուղիղ խնդրի պաշտոնով հանդես գալիս), և՛ ո՞վ (ենթակայի պաշտոնով հանդես գալիս) հարցերը: Օրինակ՝ «Գյուղում մի գինվոր

(ի՞նչ) տեսանք»։ «Գյուղում մի խումբ զինվորներ (ինչե՞ր) տեսանք»։ «Մի զինվոր (ո՞վ) եկավ»։ «Մի խումբ զինվորներ (ովքե՞ր) եկան»։

Վերջին օրինակում ովքե՞ր հարցին պատասխանում է «մի խումբ զինվորներ» կապակցությունն ամբողջությամբ, իսկ եթե ուղիղ խնդիրն արտահայտվում է տրականաձև, ապա տրվում է ու՛մ հարցը։ «Գյուղում մի զինվորի (ու՛մ) տեսանք»։

Այսպիսի (այսինքն՝ հարցերով փոխակերպման) մոտեցումը կարող է ընդլայնել անձի և ոչ անձի քերականական կարգի ըմբռնումը՝ դուրս բերելով այն միայն ուղիղ խնդրի ձևավորման շրջանակից։ Անձի և ոչ անձի քերականական կարգը բնութագրելիս հարցերին առանձնահատուկ տեղ է տալիս նաև Մ. Ասատրյանը՝ ու՛մ հարցը համարելով անձի առանձն միակ շափանիշը⁹։ Սա գալիս է մի անգամ ևս հատկանշելու պրոֆ. Գ. Զահուկյանի կողմից իրավացիորեն առանձնացված անձանունների դասը¹⁰։

2. Մինչև այժմ ասածը վերաբերում էր այն դեպքերին, երբ գոյականը հանդես էր գալիս որպես ի՞նչ, ո՞վ հարցերի պատասխան, այսինքն՝ նախադասության մեջ կատարում էր ենթակայի, խնդրի և ստորոգելիական վերադրի պաշտոն։ Սակայն գոյականը խոսքի մեջ կարող է ունենալ նաև պարագայական և որոշչային կիրառություններ և հանգես գալ որպես այլ հարցերի պատասխան։

Ու՛ր հարցին պատասխանելու դեպքում գոյականները որպես կանոն, որոշիչ հոգ չեն ստանում։ Հոգ չի ստանում և ինքը՝ ու՛ր հարցը։ Օրինակ՝ «Նրանք տեղափոխվեցին գյուղ յ|հոր բնակաբան» (ու՛ր)։ Այն բոլոր դեպքերում, երբ հիշյալ կիրառության ժամանակ կհանդիպեն որոշիչ հոգով ձևեր, պատճառը պետք է փնտրել նրանց որոշիչ կամ հատկացուցիչ լրացումների մեջ։ Օրինակ՝ «Հասանք Երևան քաղաք» (ու՛ր)։ «Գնացինք Վրաստանի հայտնի գյուղը» (ու՛ր)։ Հոգը թելադրում են Երևան և Վրաստանի հայացումները։ Նշելի է, որ նման դեպքերում ևս առկա է անհոգ գործածության միտում։ «Ժամանակակից հայերենում ուղեորման հայցականը կամ... հայցական հոլովով տեղի պարագան աստիճանաբար սկսում է հանդես գալ անհոգ գործածությամբ նաև այն դեպքերում, երբ... հոգի գործածությունը պարտադիր է, օրինակ՝ «Այդ երկիր... ստորաբաժանումներ ուղարկելուց ... հետո»... թերթը գրել է Արևմտյան Եվրոպայի երկրներ ամերիկյան... մոնոպոլիաների ներթափանցման մասին»¹¹։

Բնական է, որ գոյականները ու՛ր հարցին պատասխանելու դեպքում չեն կարող ունենալ ընդհանուր-հասկացական կամ կոնկրետ-առարկայական առումներ։ Տվյալ դեպքում հնարավոր է միայն կոնկրետ-առարկայական առում, ուր անորոշություն-որոշյալություն իմաստային հակադրությունը արտահայտվում է մի կողմից զրո (երբեմն նաև ը/ն), իսկ մյուս կողմից՝ մի ձևությամբ։ Համար. «Հասանք գյուղ» (որոշյալություն)։ «Հասանք մի գյուղ» (անորոշություն)։ Գոյականները տրական հոլովով չեն կարող հանդես գալ որպես ու՛ր-ի պատասխան։ Օրինակ՝ «Հանդիպեցինք գյուղին» (ինչի՞ն)։ Ե՞րբ-ով փոխարկելու դեպքում գոյականը կարող է հանդես գալ միայն կոնկրետ-ժամանակային

⁹ Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 204։

¹⁰ Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 183։

¹¹ «Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում», Երևան, 1973, էջ 349։

առումով: Որոշյալություն-անորոշություն իմաստային հակադրությունը այս դեպքում արտահայտվում է համապատասխանաբար ը/ն (հաճախ՝ այս, մյուս, նախորդ և այս կարգի այլ բառերի ուղեկցությամբ՝ զրո) և մի ձևությամբով: Օրինակ՝ «Առավոտը || այս առավոտ (ե՞րբ) նա եկավ»: «Մի առավոտ (ե՞րբ) նա եկավ»:

Հոգի հետաքրքրական կիրառության ենթ հանդիպում «Տարին հինգ անգամ» տիպի ձևերում: Այս դեպքում որոշիչ հոգր մակբայակերտ ածանցի արժեք ունի՝ «Տարեկան հինգ անգամ»:

Ուշագրավ են այն դեպքերը, երբ գոյականներն իրենց ուղիղ ձևով լինում են որոշիչ: Այսպիսի կիրառություն կարող են ունենալ բոլոր հասարակ, անձ ցույց տվող գոյականները (մեծ մասամբ հատուկ անձնանունների հետ) և իր ցույց տվող տեսակի ու հատուկ անունները (տեսակը նշող բառի հետ): Այստեղ, քանի որ որոշիչները միշտ էլ անհոգ են, հարցի բնույթը կախված է լրացյալի անորոշ կամ որոշյալ լինելուց: Այն բոլոր դեպքերում, երբ լրացյալը որոշիչ հոգով է, գոյական որոշիչը փոխարկվում է ո՞ր հարցով, իսկ եթե լրացյալը անորոշ է, ապա հնարավոր է ի՞նչ հարցը, բայց ինչպիսի՞ իմաստով (հմմտ. թի՞նչ մարդ է): Օրինակ՝ «Ուսուցիչ (ո՞ր) Սուրենը», «Բարդի (ո՞ր) ծառը», «Խշտան (ո՞ր) ձուկը», «Կամուրջ (ո՞ր) թերթը», «Մաղիկ (ո՞ր) կովը» և «Ուսուցիչ (ի՞նչ) մարդ է», «Բարդի (ի՞նչ) ծառ է», «Խշտան (ի՞նչ) ձուկ է» և այլն: Այս նույնը վերաբերում է նաև ածական որոշիչներին (հմմտ. «Կարմիր (ո՞ր) մատիտը», «Խելով (ինչպիսի՞) աշակերտ»):

Ուրեմն, գոյականի հատկանշային իմաստով կիրառության դեպքում որոշյալություն-անորոշություն հակադրությունը կախված է լրացյալի որոշյալ կամ անորոշ լինելուց և արտահայտվում է թաքնված ձևով՝ ո՞ր և ինչպիսի՞ հարցերի միջոցով, որոնք կարելի է դիտել որպես նույն փոխարկի (որոշիչին տրվող հարցի) անորոշ և որոշյալ տարբերակներ (համանման երևույթ կա նաև գերմաներենում):

3. Որոշիչ հոգի երկու հիմնական իմաստները տեղափոխվում են փոխանվանական կիրառությունների մեջ: Հմմտ. «Չարն է հզորը»: «Չարն է հաղթողը» (ընդհանուր հասկացական): «Կարնը դիր սեղանին» (կոնկրետ-առարկայական):

4. Հատուկ անձնանունները, ինչպես հայտնի է, սեռականով հատկացուցիչ լինելու դեպքում պահանջում են հատկացյալի որոշյալություն: Սակայն պատահում են նաև անհոգ ձևեր, որոնց պատճառը պետք է փնտրել լեզվում գործող այլ միտումների մեջ: Քննենք այդ կարգի մի դեպք.

«Արամի տղա Գրիգորը» կապակցության մեջ նկատելի է երկու միտում.

1) Արամի անձնանունը պահանջում է, որ տղա լրացյալը դրվի որոշիչ հոգով:

2) Գրիգորը բառը պահանջում է, որ իր գոյական որոշիչը (տղա) լինի անհոգ ձևով: Այս երկու միտումների բախման արդյունքը լինում է այն, որ վերջինը հաղթում է: Այստեղից կարելի է եզրակացնել, որ գոյական որոշիչ անհոգ լինելու միտումը արդի հայերենում ավելի ուժեղ ու հետևողական է, քան սեռականով անձնանունների հատկացյալի որոշյալ լինելու միտումը¹²:

5. Գրականության մեջ հանդիպում է մի անորոշ հոգի այնպիսի կիրառություն, որ նա զուգորդվում է որոշյալ բառերի հետ: Օրինակ՝ «Խնձորի մի կեսը»,

¹² Լեզվի մեջ գործող այդ կարգի միտումների վերահսկումը և գնահատումը կարևոր է լեզվի սերման պրոցեսի և նրա զարգացման ընդհանուր տեղեկների գնահատման գործում:

«Գրողի մի գիրքը»։ Դրա հիմնական պատճառն այն է, որ հատկացուցիչը պահանջում է հատկացյալի որոշյալություն, այլապես, ինչպես արդեն նշել ենք, այն կվերածվի որոշչի (հմտ. գրողի մի գիրք = գրողական մի գիրք), իսկ հատուկ անձնանունները այդպիսի հնարավորություն տվյալ դեպքում չեն թույլատրում և միշտ էլ պահպանում են իրենց հատկացուցչային իմաստը («Րաֆֆու մի վեպը»)։ Կարելի է որպես ընդհանուր կանոն նշել, որ այն բոլոր դեպքերում, երբ սեռականով լրացումը պահպանում է իր հատկացուցչային իմաստը, հատկացյալը լինում է որոշիչ հոգով՝ անգամ մի անորոշի հետ զուգորդվելիս։

Հատկանիշներ / ցուցիչներ	հատկացուցչական անորոշություն	հատկացուցչական որոշություն	հատկացուցչական անորոշություն	հատկացուցչական որոշություն	հատկացուցչական անորոշություն	հատկացուցչական որոշություն	հատկացուցչական անորոշություն	հատկացուցչական որոշություն
ը/ն	+	+	+	+	+	+	+	—
մի	—	—	+	—	±	—	—	±
զրո	+	—	—	+	—	—	—	+

Այսպիսով, մեր ասածները ամփոփված են աղյուսակում, ուր ներկայացված են լեզվական մի շարք հատկանիշներ, որոնք այս կամ այն չափով առնչվում են հոգառության երևույթի հետ։ + նշանով տրված են տատանվող (և է, և չէ) ձևերը։ Աղյուսակը կարող է լրացվել նաև այլ հատկանիշներով։

НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ ОПРЕДЕЛЕННОГО АРТИКЛЯ В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

А. Е. ХАЧАТРЯН

Резюме

При общепонятном значении слова морфемы *ը/ն* (*ը/ն*) и *ноль* выступают как позиционные варианты, а в смысле объемности, количественной определенности эти же формы противопоставляются друг другу, хотя они не могут встречаться в одной и той же позиции.

По существу, в современном армянском языке категория определенности в смысле определенность—неопределенность (известность—неизвестность) есть только в тех случаях, когда формы, противопоставляющиеся в одной и той же позиции, равнозначны по числу.

В современном армянском языке план выражения существительного в форме единственного числа соответствует форме единственного числа плана содержания только тогда, когда они употребляются с определенным артиклем *ը/ն* (*ը/ն*) или неопределенным *մի* (*մի*). Формы без артикля всегда имеют общепонятное значение и выражают неопределенность количества.